Global Disability Rights Now!

Ամբողջ աշխարհում հաշմանդամություն ունեցող անձինք հանդուրժում են անհավասար վերաբերմունք ու խտրականություն՝ հաշմանդամություն ունենալու պատճառով: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան գրավել է միջազգային հանրության ուշադրությունը, թե ինչպես կարելի է իրավիճակը հասկանալ և շտկել՝ երկրի օրենքների միջոցով: Այս սկզբունքները ցույց են տալիս ամբողջ աշխարհում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին ուղղված արդյունավետ օրենքների ընդհանուր տարրեր:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ 10 ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ ԵՆ
2. ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ
3. ՏԱՐԲԵՐ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈԱԼԻՑԻԱՆԵՐ
4. ՁԵՐ ԳՈՐԾԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ
5. ԽԵԼԱՄԻՏ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ
6. ԽԵԼԱՄԻՏ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ
7. ԶՍՊՈՒՄՆԵՐ և ՀԱԿԱԿՇԻՌՆԵՐ
8. ՀԱՏՈՒԿ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ
9. ՉԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԱՌԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ

ՍԿԶԲՈՒՆՔ 1: ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ ԵՆ

Հենց հաշմանդամություն ունեցող անձինք են կարևոր դեր խաղում օրենքները իրազեկելու, իրագործելու և կիրարկելու գործում:

Հաշմանդամություն ունեցող ակտիվիստ կինը Հորդանանից:

Փիլիսոփայություն

Հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց դաշնակիցները պետք է չափազանց լավ իրազեկ լինեն օրենքի մասին: Բազմաթիվ երկրներում խնդիրը կայանում է նրանում, որ հաշմանդամություն ունեցող անձինք տեղյակ չեն իրենց իրավունքներից և չգիտեն, թե ինչպես պետք է բողոք ներկայացնեն կամ ինչպես պետք է տեղեկացնեն իշխանություններին, երբ իրենց սեփական օրենքները չեն կիրարկվում:

Երբ խտրականություն է տեղի ունենում, հաճախ խտրականության ենթարկվող անձից և խտրականություն իրագործողից բացի էլ ոչ ոք ներկա չի լինում: Հաշմանդամության հետ կապված խտրականությունը չի կարող հաջող կերպով բացահայտվել և արմատախիլ արվել, եթե հաշմանդամություն ունեցող անձինք չունեն բավարար գիտելիքներ և մասնակցություն:

Հասարակությունը պետք է ունենա մեծ թվով հաշմանդամություն ունեցող անձինք և իրենց դաշնակիցներ, ովքեր հասկանում են և պատասխանատու են իրենց սեփական օրենքների համար, և պատրաստ են ամեն ինչ անել, որպեսզի տեղեկացնեն իրենց իշխանավորներին, երբ հաշմանդամություն ունեցող անձանց օրենքները չեն կիրակվում: Տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող համայնքները պետք է շարունակեն գործել, մինչև վերջապես օրենքները կիրակվեն:

Օրինակ

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին որոշ օրենքներ պարտավորեցնում են հիվանդանոցներին ապահովել ժեստերի լեզվի թարգմանիչներ խուլ պացիենտներին: Որպեսզի երաշխիք լինի, որ օրենքը կիրարկվում է, լսողության խնդիր ունեցող անձը, ով օգտվում է հիվանդանոցի ծառայություններից (և իրենց ընտանիքի անդամները) պետք է իրազեկ լինեն օրենքի գոյության մասին, և իմանան ինչպես վարվել, եթե հիվանդանոցը չբավարարի իրենց իրավունքները: Օրինակի համար՝

- Կարո՞ղ են իրենք ապահով կերպով զեկուցել հիվանդանոցի կողմից օրենքի չիրարկման մասին գրավոր նամակով կամ զանգահարել օմբուդսմենին, բողոք ներկայացնել օրենքի կիրարկման համապատասխան գործակալություն կամ գտնել իրավական փաստաբան, ով իր անունից գործը կհասցնի դատարան:
- Արդյո՞ք կան ռեսուրսներ, որոնք կօգնեն նրանց հոգալ իրենց ծախսերը՝ այս գործողությունները իրականացնելիս:
- Արդյո՞ք կան հաշմանդամություն ունեցող անձանց շահերը պաշտպանող փաստաբաններ կամ կազմակերպություններ, որոնք կօգնեն նրանց նամակներ կամ բողոքներ գրել:
- Ինչպիսի՞ տեղեկություն պետք է նրանք տրամադրեն, որպեսզի օգնեն հետաքննել բողոքը:
- Ինչպե՞ս պետք է նրանք վարվեն, եթե բողոքը անհաջողությամբ պսակվի:

Նմանապես, եթե օրենքը թույլատրում է, որպեսզի հաշմանդամություն ունեցող ուսանողներին տրամադրվի լրացուցիչ ժամանակ թեստ հանձնելու համար, սովորելու հետ խնդիր ունեցող ուսանողը պետք է իմանա օրենքի մասին, որպեսզի կարողանա օգտվել մատչելի հարմարությունների իր իրավունքից: Եթե մտավոր խնդիր ունեցող անձին զրկում են քվեարկելու իր ձայնի իրավունքից, չնայած որ վերջինս հասկանում է, թե ինչպես պետք է քվեարկի և կատարի իր անձնական ընտրությունը, նա պարտավոր է իմանալ իր ընտրական իրավունքը, որը

նախատեսված է օրենքով, և պետք է իմանա ինչպես վարվել, երբ իրեն զրկում են իր իրավունքից:

ՍԿԶԲՈՒՆՔ 2: ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հաշմանդամություն ունեցող անձինք կենսագործունեության լիարժեք իրավունք ունեն, և չպետք է ենթարկվեն խտրականության որևէ կազմակերպության, ընկերության կամ իրավաբանական անձի կողմից, որոնք մատուցում են ծառայություններ կամ ապրանքներ են մատակարարում:

Մեքսիկայի համաժողովի մասնակիցների թվում կլինեն հաշմանդամություն ունեցող և չունեցող անձինք:

Փիլիսոփայություն

Հաշմանդամություն ունեցող անձանց պետք է հասանելի լինեն քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, սոցիալական, մշակութային կյանքի բոլոր բնագավառները: Կան բազմաթիվ հանգամանքներ, որտեղ հաշմանդամություն ունեցող անձինք բախվում են խտրականության: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության օրենքները պետք է անդրադառնան այս բոլոր հանգամանքներին, սկսած առողջապահական աջակցությունից մինչև ֆիլմի դիտումը, աշխատանքի տեղավորումից մինչև բնակարանի ձեռք բերումը,

վարորդական իրավունք ստանալուց մինչև ինքնաթիռով ճանապարհորդումը, քանի որ հաշմանդամություն ունեցող անձինք հավասար մասնակցության իրավունք ունեն հասարակության բոլոր բնագավառներում:

Սա չի նշանակում, որ պետք է ընդամենը մեկ օրենք լինի, որը կանդրադառնա բոլոր հնարավոր հանգամանքներին, որտեղ հաշմանդամություն ունեցող քաղաքացիները բախվում են խտրականության: Հաշմանդամություն ունեցող անձինք մի որոշակի երկրում կարող են որոշում կայացնել՝ ընտրելու կոնկրետ թեմա կամ առաջարկվող օրենք, որը որպես ռազմավարական առանցք կարող է լավագույնս ծառայել օրենսդիրներին և հասարակությանը: Օրինակ, տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող համայնքը կարող է լոբբինգ/ քարոզչություն ծավալել նախ կառավարական շենքերում մատչելիության համար, կամ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության և մատչելի տրանսպորտային միջոցների համար: Բացի այդ, որոշ երկրներ կարող են ունենալ գործող օրենքներ, որոնցից մի քանիսն են ուղղված որոշակի խնդիրների, ինչպիսիք են քվեարկությունը կամ որոշակի հաշմանդամություն ունեցող անձանց: Սրանք հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրենքներ չեն, բայց շարունակում են ծառայել անհրաժեշտ նպատակին:

Օրինակ

ԱՄՆ-ում հաշմանդամությունությունունեցող անձանց ազգային իրավունքների որոշ նախկին օրենքներ արգելում էին կառավարության կողմից ֆինանսավորվող ծառայությունների և հանրային կրթության խտրականությունը: Որոշ նահանգներ նաև ունեին շինարարական օրենքներ, որոնցում ներառված էին հաշմանդամության մատչելիության պահանջները: Այդ հին օրենքների ընդունումն ու իրականացումը նպաստեցին, որ վերջնականորեն զարգանա և ընդունվի ընդլայնված Հաշմանդամություն Ունեցող Ամերիկացիների Ակտը, որը վերաբերում է հաշմանդամություն ունեցող անձանց խտրականությանը ինչպես պետական այնպես էլ մասնավոր ընկերություններում, զբաղվածության, տրանսպորտային, ֆիզիկական մատչելիության և հեռահաղորդակցության ոլորտներում:

ՍԿԶԲՈՒՆՔ 3: ՏԱՐԲԵՐ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈԱԼԻՑԻԱՆԵՐ

Տարբեր հաշմանդամություն ունեցող անձանց կոալիցիաները անհրաժեշտ են՝ կառուցելու ավելի մեծ քաղաքական, տնտեսական և սոցիալական ազդեցություն, որն անհրաժեշտ է մնայուն փոփոխությունների համար:

Տարբեր հաշմանդամություն ունեցող մի խումբ կանայք հանդիպում են, որպեսզի լուծեն ընդհանուր խոչընդոտներ և մարտահրավերներ:

Փիլիսոփայություն

Ամբողջ աշխարհում հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց ընտանիքները միշտ պայքարել են իրենց իրավունքների համար, որոնք հատկապես վերաբերում են հենց իրենց հաշմադամության տեսակին (օրինակ, մարդիկ, ովքեր կույր են, պայքարում են կրթություն ստանալու իրենց իրավունքի և Բրայլյան նրութեր օգտագործելու համար, անվասայլակից օգտվողները պայքարում են, որպեսզի շենքերի մուտքերի մոտ լինեն թեքահարթակներ, և այլն):

Սակայն տարբեր հաշմանդամություն և խրոնիկ հիվանդություններ ունեցող բոլոր մարդիկ բախվում են խտրականության, նախապաշարմունքների և կարծրատիպերի արգելքների:

Եթե նրանք, իրենց ընտանիքները, ընկերները և շահերի պաշտպանները միավորեն իրենց ազդեցությունը որպես սպառողներ, ընտրողներ, անհատներ և որպես խմբեր, որոնք շփվում են մամուլի և սոցիալական լրատվամիջոցների միջոցով,

հաշմանդամություն ունեցող անձանց համայնքը ընդհանուր առմամբ կարող է ձեռք բերել համախմբված ինքնություն և ուժ, որը չի կարելի ձեռք բերել ուրիշ այլ կերպ: Հաշմանդամություն ունեցող անձինք պետք է լինեն կարգապահ, անաչառ և ռազմավարական, որպեսզի հասնեն այս սկզբունքին: Հատուկ հաշմանդամության խմբեր կարող են ճանաչել կարծրատիպեր, որոնք ուղղված են իրենց, բայց դեռևս ունենալ նախապաշարմունքներ և կարծրատիպեր այլ հաշմանդամություն ունեցող անձանց մասին: Որոշ խմբեր կարող են ունենալ անցյալի հակամարտություններ, և կարող են լինել հաղորդակցման մարտահրավերներ, բայց, ի վերջո, կոալիցիայի առաջնորդները պետք է միավորեն բոլոր տեսակի հաշմանդամության խմբերին, այդ թվում

- Տեսանելի և ոչ տեսանելի հաշմանդամություն ունեցող անձինք
- Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողները
- Հաշմանդամահեն կազմակերպությունները (DPOs)
- Կազմակերպություններ, որոնք առաջարկում են ծառայություններ հաշմանդամություն ունեցող անձանց

Երբ ամեն ինչ դժվարանում է, ընդգծեք ձեր ընդհանուր նպատակները՝ խտրականության վերացում, բոլոր հաշմանդամության խոչընդոտների վերացում, խելամիտ հարմարեցումների հաստատում և հավասար հնարավորությունների ստեղծում: Երբեք մի զոհաբերեք մեկ խմբին՝ կարճատև հաղթանակի հասնելու համար, նույնիսկ, եթե դա կարևոր է, ինչպիսին է դժվարությամբ ընդունված օրենքը, քանի որ այն միշտ երակարատև ժամկետով ավելի կթուլացնի կոալիցիան: Հաշմանդամություն ունեցող անձանց խմբերի հետ աշխատանքը ևս ստեղծում է մարդկանց բազա, ովքեր իրազեկ են օրենքից և հասկանում են, որ իրավունքներ կարելի է ձեռք բերել, երբ **բոլոր տեսակի** հաշմանդամություն ունեցող անձինք լինեն հավասար: Այս տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող անձանց բազան կարող է մոբիլիզացնել և արձագանքել, երբ օրենքները ուսումնասիրվեն կամ վերամշակվեն, որպեսզի պահպանեն ընդհանուր սկզբունքները և շարունակեն ծառայել որպես միասնական խումբ՝ իրենց իրավունքների պաշտպանության համար:

Իրական ներառական օրենքը վստահություն կներշնչի կոալիցիայի առաջնորդներին,քանի որ վերջիններս կարևորում են տարբեր հաշմանդամություն ունեցող անձանց ներառումը, երբ խոսում են քաղաքական գործիչների, լրատվամիջոցների և, հենց իրենց, հաշմանդամություն ունեցող անձանց հետ: Այս կարևոր սկզբունքը պետք է նաև առաջնորդի գործնական որոշումների ժամանակ. կոալիցիայի առաջնորդները ցույց են տալիս իրենց նվիրումը ներառական գործընթացին՝ ապահովելով, որ դասընթացները անցկացվեն սայլակի համար

մատչելի վայրերում, որպեսզի տրամադրվի ժեստերի լեզվով թարգմանություն և այլընտրանքային ձևաչափերով նյութեր, ինչպես նաև այլ հարմարեցումներ, որոնք մատչելի կլինեն հաշմանդամություն ունեցող անձանց համայնքի բոլոր մարդկանց համար:

Օրինակ

Հաշմանդամություն Ունեցող Ամերիկացիների մասին ակտը (ADA) գրվել է՝ պաշտպանելու տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում, քաղցկեղ, մտավոր առողջական հաշմանդամություն ունեցող, ՄԻԱՎ / ՁԻԱՀ, թմրադեղեր կամ ալկոհոլ չարաշահող, բազմաթիվ խրոնիկ հիվանդություններ և ֆունկցիոնալ սահմանափակումներ ունեցող անձանց:

Նախքան Հաշմանդամություն Ունեցող Ամերիկացիների մասին ակտը (ADA) օրենք կդառնար, ռեստորանային առևտրային ընկերությունները հասկացան, որ օրենքը աշխատանքային խտրականությունից կպաշտպանի մարդկանց, ովքեր ունեն ՄԻԱՎ / ՁԻԱՀ: Եթե օրենքն ընդունվի, ապա անօրինական կլինի հրաժարվել աշխատանքի ընդունել կամ աշխատանքից ազատել որակյալ մատուցողների, սպասք լվացողների և խոհարարների միայն այն պատճառով, որ գործատուն գիտի կամ կասկածում է, որ վերջիններս ունեն ՄԻԱՎ / ՁԻԱՀ: Ռեստորանային ընկերությունները սպառնացին, որ մեծ քարոզարշավ կծավալեն և քաղաքական գործիչներին իրենց համախոհ կդարձնեն, մինչև որ ՄԻԱՎ / ՁԻԱՀ-ով մարդկանց լիովին բացառեն Հաշմանդամություն Ունեցող Ամերիկացիների մասին ակտից (ADA): **Մեծ քաղաքական և հասարակական ճնշման դեմ խոնարհվելու փոխարեն՝ հաշմանդամություն ունեցող անձանց առաջնորդներն ու կազմակերպությունները, որոնք իրենց ջանքերը միավորվել էին օրենքի ընդունման համար, հրաժարվեցին երես են թեքել ՄԻԱՎ / ՁԻԱՀ-ի համայնքից, ինչպես նաև մարդկանցից և խմբերից, ովքեր եղել էին հիմնական դաշնակիցները Հաշմանդամություն Ունեցող Ամերիկացիների մասին ակտի (ADA) ընդունման երկար պայքարում:** Նրանք գիտեին, թե ինչ է գիտությունը արդեն հայտնաբերվել ՄԻԱՎ / ՁԻԱՀ-ի մասին, և հասկացել էին, որ հիվանդությունը չի կարող փոխանցվել պատահական շփման միջոցով: ՄԻԱՎ / ՁԻԱՀ-ով վարակակիր անձը, մասնավորապես հիվանդության վաղ փուլերում, կարող է ապահով կերպով աշխատել սննդի բնագավառում՝ առանց անհարկի վտանգելով ուրիշներին: Եթե տարբեր հաշմանդամություն ունեցող անձանց կոալիցիան թույլ տար օրենքից բացառել ՄԻԱՎ / ՁԻԱՀ-ով վարակակիր անձանց, ապա կոալիցիան հիմնականում կաջակցեր հենց այն կարծրատիպերին և նախապաշարմունքներին, որոնց դեմ պետք է պայքարեր այդ օրենքը: **Կոալիցիան ամուր կանգնեց, և օրենքը ընդունվեց:**

ՍԿԶԲՈՒՆՔ 4: ՁԵՐ ԳՈՐԾԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ

Բարձր մակարդակի օրենք և քաղաքականության մշակողներն ու ազդեցիկ մարդիկ կարող են հանդես գալ որպես ձեր գործի կարևոր պաշտպաններ:

2014 թվականին Գյումրու քաղաքապետը հանդիպում է հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպաններին:

Փիլիսոփայություն

Անկախ նրանից, թե երկիրը ժողովրդավարական է կամ սոցիալիստական, ունի միապետը, թե դաշնային հանրապետություն է, քանի դեռ կա օրենքի գերակայության որոշակի ճանաչում և իշխանության ներկայացուցիչների համակարգ, ովքեր ստեղծում և կառավարում են այդ օրենքները, կարևոր է ունենալ դաշնակիցներ այդ կառավարության ներկայացուցիչների շրջանում, ովքեր հասկանում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները.

Հաշմանդամությունը կարելի է զգալ բազմաթիվ առումներով և այն չի ճանաչում ցանկացած քաղաքական կուսակցություն, ռասսա և տնտեսական դաս: Անհատը կարող է ծնվել հաշմանդամությամբ, ձեռք բերել այն դժբախտ պատահարի կամ խրոնիկ իրավիճակի պատճառով, կարող է ունենալ հաշմանդամություն ունեցող երեխա կամ ընտանիքի անդամ, կարող է հաշմանդամություն ձեռք բերել տարիքի

հետ, կամ ամուսնանալ մեկի հետ, ով որևէ կերպ կապ ունի հաշմանդամության հետ: Շատ կարևոր է գտնել ազդեցիկ լիդերներ/ առաջնորդներ, ովքեր որևէ կերպ առնչվել են հաշմանդամության հետ, և վերջիններս կարող են դառնալ ձեր պաշտպանները: Դրանք այն անհատներն են, ովքեր.

- Ովքեր կունենան փորձի կամ, առնվազն, կլինեն բաց՝ սովորելու բազմատեսակ խտրականության և արգելքների մասին, որոնց բախվում են հաշմանդամություն ունեցող անձինք:
- Կկարողանան անձնապես արտահայտել հաշմանդամների իրավունքների օրենքների նպատակներն ու այդ օրենքների կարևորության պատճառները, երբ վերջիններս կխոսեն իրենց գործընկերների հետ, և կկարողանան կապ հաստատել հաշմանդամների իրավունքների այլ առաջնորդների հետ՝ կարևոր քաղաքական և սոցիալական ֆորումներում:
- Կունենան վերապատրաստված օրինական աշխատակազմ, ովքեր կարող են աջակցել օրինագծի ակտուալ զարգացմանն ու ահազանգել հաշմանդամություն ունեցող անձանց կոալիցիային հնարավորությունների և ռիսկերի վերաբերյալ՝ առաջարկված օրինագիծը օրենք դառնալու ժամանակահատվածում:
- Եթե կառավարության ներկայացուցիչը ունի հաշմանդամություն, վերջինս նույնպես օգնում է կոտրել կարծրատիպեր այն մասին, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունեն սահմանափակ կարողություններ և ապագա հեռանկարներ:

Օրինակ

ԱՄՆ-ի երկու հիմնական քաղաքական կուսակցությունների քաղաքական գործիչները, ովքեր պայքարել են, որպեսզի Հաշմանդամություն Ունեցող Ամերիկացիների Ակտը դառնա օրենք, ներառել էին շաքարային դիաբետով մի մարդու, ով վետերան էր և պատերազմի ժամանակ կորցրել էր իր ձեռքը, և խուլ եղբայր ունեցող մի անձի: ԱՄՆ-ի Սպիտակ տան կարևոր աշխատակիցներից մեկը, ով ականատես էր եղել իր մոր նկատմամբ խտրականության ապահովագրական ընկերությունների կողմից, քանի որ վերջինս քաղցկեղի դեմ էր պայքարում, նպաստեց, որպեսզի 2008 թվ.-ին նախագահ Օբամայի կողմից ընդունած Մատչելի Խնամքի Ակտը պահանջի մասնավոր ապահովագրական ընկերություններին վաճառել առողջապահական ապահովագրություն մարդկանց նախապայմաններով (նախկինում առողջապահությունը ԱՄՆ –ում բացառում էր նախապայմանները):

ՍԿԶԲՈՒՆՔ 5: ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Հաշմանդամության խտրականության օրենքները չպետք է սահմանվեն զուտ բժշկական ախտորոշման տեսանկյունից

Հաշմանդամություն ունեցող երիտասարդ կինը բավականություն է ստանում ադապտիվ հեծանվավարությունից:

Փիլիսոփայություն

Հաշմանդամության խտրականության օրենքները սկսվում են այն ըմբռնումից, որ հաշմանդամություն ունեցող անձինք լիիրավ մարդկային էակներ են՝ նույն հնարավորություններով, կարողություններով և ունեն նույն արժանիքները, ինչպես բոլոր մարդիկ: Նրանք ընդունում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք անհավասարության պատճառով ուշադրության և օգնության կարիք ունեն, և նաև ընդունում են, որ անհավասարության ակունքները գալիս են դարավոր անհավասար տնտեսական, սոցիալական և քաղաքական հնարավորություններից, որոնք ստեղծված են հաշմանդամություն ունեցող անձանց համար (սա ոչ միայն անհատի բժշկական ախտորոշման հետևանք է): Հաշմանդամության խտրականության օրենքները հաշվի են առնում բազմաթիվ գործոններ, ինչպիսիք են նախապաշարմունքները, կարծրատիպերը, սխալ խղճահարությունն ու ֆիզիկական խոչընդոտները, որոնց հետևանքով հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարող ամբողջովին օգտագործել իրենց ներուժը: Այս օրենքները պետք է՝

- Հստակորեն ընդունեն հաշմանդամություն ունեցող անձանց դեմ գոյություն ունեցող խտրականությունը

- Ընդունեն վաղեմի ֆիզիկական, սոցիալական, տնտեսական, քաղաքական և մշակութային արգելքների ազդեցությունը հաշմանդամության վրա
- Չպետք է սահմանեն հաշմանդամությունը զուտ բժշկական ախտորոշման տեսանկյունից

Ի տարբերություն հաշմանդամության խտրականության օրենքների, գոյություն ունեն աջակցության և հատուցումների օրենքներ, որոնք գրեթե միշտ սահմանում են հաշմանդամությունը՝ հիմք ընդունելով բժշկական չափանիշները, և կենտրոնանում են այն բանի վրա, ինչ չեն կարող անել հաշմանդամություն ունեցող անձինք: Շատ երկրներ, այդ թվում, ԱՄՆ-ը, ունեն օրենքներ և քաղաքականություններ, որոնք ապահովում են նպաստներ և աջակցություններ, ինչպես օրինակ, եկամտահարկի աջակցությունը, ցածր գնով առողջապահական ծառայությունները, կամ հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքների համար նախատեսված աջակցության այլ ձևեր: Այդ օրենքները կարևոր նպատակի են ծառայում և անհրաժեշտ են հաշմանդամություն ունեցող այն անձանց, ովքեր չունեն հավասար հնարավորություններ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են աշխատանքի, կրթության, բնակարանային և տրանսպորտի բնագավառները:

Օրինակ

Հաշմանդամություն Ունեցող Ամերիկացիների մասին ակտը (ADA) ունի երեք կետերից բաղկացած հաշմանդամության սահմանում: Երրորդ կետը, և որոշ չափով երկրորդ կետը սահմանում են, թե ինչպես հենց հասարակությունն է անձանց դարձնում հաշմանդամ՝ նրանց վերաբերվելով որպես ֆիզիկական կամ մտավոր խնդիրներ ունեցողներ, և, հետևաբար, նրանց ստիպելով հասարակության մեջ բախվել բազում արգելքների:

1. Առաջին կետը, որն ամենաշատն ունի բժշկական ուղղվածություն, սահմանում է, որ անձն ունի ֆիզիկական կամ մտավոր/հոգեկան վիճակ, որը «զգալիորեն սահմանափակում է» կենսական գործունեության մեծ մասը (ինչպես օրինակ քայլելը կամ տեսնելը):
2. Երկրորդ կետը սահմանում է, որ անձը ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամության պատմություն ունի (ինչպես օրինակ մի հիվանդություն, որը «երբեմն է դրսևորվում» կամ «թուլացման փուլում» է):
3. Երրորդ կետը սահմանում է, որ անձը ունի հաշմանդամություն, եթե նրան վերաբերվում են որպես հաշմանդամություն ունեցող անձ:

ՍԿԶԲՈՒՆՔ 6: ԽԵԼԱՄԻՏ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

Խելամիտ հարմարեցումները անհրաժեշտ են, որպեսզի հարթեցվի խաղադաշտը այնպես, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան ունենալ նույն հնարավորություններն ու իրավունքները, ինչպես իրենց ոչ հաշմանդամ հասակակիցները:



Այլընտրանքային ձևաչափերը, ինչպիսիք են բրայլյան և խոշոր տպագիրները, նմուշներ են խելամիտ և քիչ ծախսատար հարմարեցումների:

Փիլիսոփայություն

Հաշմանդամություն ունեցող անձինք չունեն մասնակցության հավասար իրավունքներ, եթե նրանք ստիպված են միայնակ հաղթահարել ֆիզիկական խոչընդոտներ և վաղեմի գործողություններ, որոնք նրանց առանձնացնում են: Անվասայլակից օգտվողի իրավունքը, որպեսզի վերջինս կարողանա աստիճաններով շենք մտնել և ավտոբուսից օգտվել, պարզապես «դատարկ» իրավունք է: Լավ համալսարան հաճախելու իրավունքը «անիմաստ» է լսողության խնդիր ունեցողի համար, եթե նրա համար չեն ապահովում դասեր ժեստերի լեզվի թարգմանչի մասնակցությամբ:

Արդյունքում, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրենքները չեն կարող պարզապես շնորհել այնպիսի իրավունքներ հաշմանդամություն ունեցող անձանց, որոնք կստեղծեն հավասար հնարավորություններ բոլորի համար: «Խելամիտ հարմարեցումներ» տերմինը հորինվել է՝ արտահայտելու տարբեր

տեսակի հարմարեցումներ, որոնք հաշմանդամություն ունեցող անձանց կտան նույն հնարավորությունները, ինչպես հաշմանդամություն չունեցողներին, և նրանք կկարողանան ապրել լիարժեք կյանքով իրենց համայնքներում:

Չնայած խելամիտ հարմարեցումները կարող են պահանջել նախնական ներդրումներ, շատ դեպքերում այդ գումարը համեմատաբար փոքր է: Երբ դուք մտածում եք համայնքների ուժեղացման և համայնքի անդամների կյանքի բարելավման մասին, խելամիտ հարմարեցումների համար արվող ներդրումները տնտեսապես ձեռնտու են, քանի որ դա թույլ կտա հաշմանդամություն ունեցող բնակչությանը լինել հասարակության ակտիվ անդամներ՝ ստանալով կրթություն, նպաստելով աշխատուժին, և ամբողջովին դառնալ հասարակության համար պիտանի մարդիկ:

Օրինակ

Խելամիտ հարմարեցումների օրինակներ են՝

- Աշխատավայրում բարձրացնել գրասեղանը, որպեսզի այն մատչելի լինի սայլակից օգտվողի համար
- Օժանդակ տեխնոլոգիաների կամ այլընտրանքային ձևաչափերի տրամադրում տեսողության խնդիրներ ունեցող անձանց
- Տրամադրել լրացուցիչ ժամանակ կամ հանգիստ տարածքներ հոգեկան խնդիրներ կամ ուսուցման դժվարություն և ուշադրության կենտրոնացման խնդիրներ ունեցող անձանց
- Ունենալ ճկուն աշխատանքային գրաֆիկ խրոնիկ առողջական խնդիրներ ունեցող անձի համար, ում հարկավոր են ավելի շատ ընդմիջումներ, կամ ով ունի դեղորայք ընդունելու ժամանակացույց, որը դժվարացնում է վաղ արթնանալ:
- Դպիր տրամադրել մեկին, ով ունի տեսողական կամ մտավոր խնդիրներ
- Տրամադրել ենթագրեր և ժեստերի լեզվի թարգմանիչ լսողության խնդիրներ ունեցող անձանց

ՍԿԶԲՈՒՆՔ 7: ԶՍՊՈՒՄՆԵՐ և ՀԱԿԱԿՇԻՌՆԵՐ

Հարմարեցումներ անելիս՝ խելամիտ հարմարեցումները չեն կարող իրավաբանական անձի համար դառնալ անհարկի ֆինանսական բեռ:



Մեծ ծախսերի կարիք չի զգացվի՝ փոխարինելով հին ավտոբուսները մատչելի ավտոբուսներով, և տեղական ավտոբուսային համակարգը կդառնա ավելի մատչելի ժամանակի ընթացքում:

Փիլիսոփայություն

Ուժեղ և կայուն օրենքը պետք է ունենա զսպումների և հակակշիռների համակարգ, որպեսզի կարողանա ցույց տալ, որ հաշմանդամության հետ կապված հարմարեցումները և ձևափոխումները խելամիտ են և ոչ անսահմանափակ: Առաջարկված օրենքը ավելի արագ կընդունվի, կստանա հասարակական աջակցություն և արդյունավետ կերպով կիրարկվի, եթե այն ընկալվի որպես արդար օրենք, այլ ոչ թե պաշտպանի միայն փոքրամասնության իրավունքները, որոնք արդեն իսկ ընդունված են. օրենքը պետք է ծառայի հասարակության բոլոր հատվածներին: Հաշմանդամություն ունեցող անձինք խելամիտ հարմարեցումների իրավունք ունեն (ԽՀ) և նրանց համար պետք է վերացվեն խոչընդոտները, սակայն այդ իրավունքները կարող են հաշվեկշիռի բերվել մի շարք ձևերով:

Սա կարևոր է, քանի որ, եթե խելամիտ հարմարեցումների օրենքը ինքնին սահմանում է հնարավոր սահմանափակումներ, այն օգնում է լռեցնել օրենքի քննադատներին, ովքեր կունենան մտավախություններ՝ օրենքի չափազանց թանկ լինելու հետ կապված, և կմտածեն, որ օրենքը մարդկանց գործազրկության պատճառ կհանդիսանա և չափազանց շատ առավելություններ կտա հաշմանդամություն ունեցող անձանց: Ընդ որում, եթե օրենքը հստակ է իր սահմանափակումներում, ապա հաշմանդամություն ունեցող անձինք, ամենայն հավանականությամբ, ավելի վստահ կարող են բարձրացնել հարմարեցումների իրենց իրավունքը: Հակակշիռներն ու զսպումները թույլ են տալիս հաշմանդամություն ունեցող անձանց դառնալ համայնքի լիիրավ անդամ և կոտրել բոլոր սխալ պատկերացումները, որ նրանք բեռ են հասարակության համար:

Օրինակ

Սցենար: Անվասայլակից օգտվող անձը ցանկանում է հագուստ գնել ընտանեկան սեփականություն հանդիսացող փոքրիկ խանութից, բայց մուտքի դիմաց կան հինգ աստիճաններ և չկա բավարար տարածք՝ թեքահարթակ կառուցելու համար: Համաձայն Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին ակտի (ADA), գործարար սեփականատիրոջից չի պահանջվի խանութը դարձնել անվասայլակի համար մատչելի, եթե նա կարողանա ապացուցել, որ շինարարության արժեքը իր ֆինանսական միջոցներից ավել կարժենա, կամ «անհարկի ֆինանսական բեռ» կլինի իր բիզնեսի համար: Սակայն, գործարար սեփականատիրոջից կպահանջվի խելամիտ հարմարեցումներ անել այլընտրանքային ճանապարհով, ինչպես, օրինակ, օգտագործելով զանգ կամ ներքին կապի համակարգ փողոցում, որպեսզի հաճախորդները օգտվեն սպասարկման իրենց իրավունքից:

Կան բազմաթիվ գործոններ, որոնք կարող են խելամիտ հարմարեցումների համար սահմանափակումներ սահմանել:

1. **Տարբեր սահմանափակումներ կարող են սահմանվել տարբեր անձանց համար՝** կախված տվյալ իրավաբանական անձի ռեսուրսներից: Օրինակ, կառավարության գործակալությունը կամ մեծ շահութաբեր ընկերությունը, ամենայն հավանականությամբ, ունի ավելի շատ ֆինանսական կարողությունները մատչելիության փոփոխություններ անելու համար, քան փոքր ընտանեկան բիզնեսը:

2. **Տարբեր սահմանափակումներ կարող են համարվել՝ կախված պահանջվող հարմարեցման տեսակից:** Օրինակ, խելամիտ է որոշակի սահմանափակում ունենալ այն հարցում, թե որքան պետք է բժիշկը ծախսի, որպեսզի հին շենքում իրենց երկրորդ հարկի գրասենյակը դարձնի մատչելի: Սակայն, դա չի նշանակում, որ պետք է բժշկի պարտավորություններում ևս նման սահմանափակումներ լինեն, որպեսզի նա լրացուցիչ ժամանակ տրամադրի հաշմանդամություն ունեցող հիվանդին կամ իր երեխա պացիենտի կույր ծնողներին տրամադրի բրայլյան այբուբենով տեղեկատվություն:
3. **Սահմանափակումներ կարող են կիրառվել, եթե դրանք վերաբերում են հանրային անվտանգությանը**, և հաստատում են, որ աշխատողները զբաղեցնում են աշխատատեղեր, որոնց որակավորումն իրենք ունեն: Օրինակ, աշխատանքի հայտատուի կամ աշխատակցի հարմարեցումներ անելու իրավունքը կարող է սահմանափակվել, եթե գործատուն կարողանա ապացուցել, որ դիմումատուն չի կարող կատարել աշխատանքի էական գործառույթներ՝ նույնիսկ խելամիտ հարմարեցումների պարագայում, կամ, եթե գործատուն կարողանա ապացուցել, որ աշխատողը չի կարող կատարել աշխատանքը՝ առանց վտանգելու իրեն կամ ուրիշներին: Այն պնդումը,, որ հաշմանդամություն ունեցող ցանկացած անձ չի կարող աշխատանք կատարել, կամ անվտանգության ռիսկ է համարվում, պետք է հիմնված լինի իրական փաստերի և ոչ միայն կարծրատիպերի վրա: Խուլ կամ թույլ լսողություն ունեցող անձի իրավունքները կարող են սահմանափակվել՝ ձայնային ինժեների պաշտոնում, քանի որ նա լիովին չի կարողանա զգալ արձանագրված ձայնը, բայց ուժեղ լսողություն ունենալ պարտադիր չէ, որպեսզի անվտանգ բեռնատարի վարորդ լինես՝ լավ տեսողության և անվտանգ ճանապարհների պարագայում:
4. **Նոր կառույցների / գնումների տարբեր սահմանափակումներն ու չափանիշները հին շենքերի և գոյություն ունեցող համակարգերի հետ համեմատած** կարող են հանդիսանալ որպես արգելքների վերացման ընդհանուր զսպումներ և հակակշիռներ: Օրինակ, մի քաղաքից կամ ընկերությունից կարելի է պահանջել ձեռք բերել միայն մատչելի ավտոբուսների, քանի որ այն փոխարինում է իր տրանսպորտային միջոցները, սակայն, հնարավոր չէ պահանջել, որ վերջինս անմիջապես փոխարինի իր ամբողջ շարժակազմը մատչելի տրանսպորտային միջոցներով: Սա նշանակում է, որ քաղաքը կամ ընկերությունը ստիպված չէ ձեռնարկել շատ թանկ փոփոխություն, բայց ավտոբուսային համակարգը կամ շարժակազմը կդառնա ավելի մատչելի ժամանակի ընթացքում:

ՍԿԶԲՈՒՆՔ 8: ՀԱՏՈՒԿ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության օրենքները չեն կարող արդյունավետ լինել առանց հատուկ կիրարկվող կանոնակարգերի և ժամանակացույցի:

Հստակ կանոնակարգերը կարևոր են, որպեսզի քաղաքացիները կարողանան հասկանալ և ենթարկվել օրենքին:

Փիլիսոփայություն.

Այս պահին ամբողջ աշխարհում շատ երկրներ ունեն գրքերում գրված օրենքներ, որոնք արգելում են խտրականությունը կամ պաշտպանում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները: Սակայն, շատ քիչ երկրներ ունեն օրենքներ, որոնք կիրարկվում են, և ընդհանուր պատճառներից մեկը օրենքների **պրակտիկ կիրարկման մանրամասների բացակայությունն է:**

Օրենքը կարող է հանճարեղ լեզվով հայտարարել, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ այլևս խտրականության չեն ենթարկվում և նրանց համար ապահովվում են հավասար իրավունքներ, բայց պետք է լինեն օրենքի կիրարկման գործիքներ, ինչպիսիք են դաշնային, նահանգային կամ տեղական կանոնակարգեր, ինչպես նաև պարտադիր կիրառվող ստանդարտներ և ֆորումներ, որոնք կանդրադառնան վիճարկվող հարցերին և գործնականորեն ցույց կտան, թե ինչպես կարելի է հասնել խոչընդոտներով լի աշխարհում իդեալական օրենքի:

Բացի այդ, հատուկ ժամկետներ պետք է սահմանել, օրինակ, երբ ձևափոխությունները պետք է ավարտված լինեն, կամ երբ նոր շինությունները պետք է դառնան մատչելի:

Ունենալով շատ կոնկրետ կանոնակարգեր և ժամկետներ ամեն ինչի վերաբերյալ՝ սկսած դռների լայնությունից մինչև ինտերնետային մատչելիություն, մայթեր և այլ ենթակառուցվածքներ, **օրենքի համապատասխանությունը դառնում է շատ չափելի:**

Օրինակ

Երբ «Հաշմանդամություն Ունեցող Ամերիկացիները Մասին» Ակտը (ADA) ընդունվեց, այն սահմանում էր կիրարկման շատ կոնկրետ ժամկետներ: Օրինակ, ամեն նոր ավտոբուս պետք է ունենար անվասայլակի համար նախատեսված վերելակ, հետևաբար, հաշվի առնելով նոր ավտոբուսների շրջանառության տեմպը, բոլոր ավտոբուսները կդառնային անվասայլակի համար մատչելի 20 տարվա ընթացքում: Կան նաև շատ կոնկրետ կանոնակարգեր, ուղեցույցներ և ժամկետներ հին շենքերի ձևափոխման և նոր կառույցների շինարարության վերաբերյալ:

Կանոնակարգերը պետք է բավարարեն այնպիսի հարցերի պատասխանները, ինչպիսիք են՝

- Որո՞նք են «մատչելի» շինության պահանջները: Ինչպիսի՞ տեսք ունի մատչելի շինությունը: Որքա՞ն լայն են դռները և որքան բարձր են վաճառասեղաններն ու լվացարանը: Որքա՞ն ուղղաձիգ է թեքահարթակը: Որտե՞ղ պետք բրայլյան նշանները տեղադրված լինեն, պատերի վրա թե վերելակներում:
- Ի՞նչ ժամկետներում պետք է ավտոբուսները ունենան վերելակներ կամ դառնան մատչելի:
- Երբ ավտուբուսը ընթացքի մեջ է, որքա՞ն հաճախ պետք է վարորդը հայտարարի կանգառների փողոցների գտնվելու վայրը:
- Որո՞նք են պահանջները, որպեսզի հաղորդակցությունը «հասանելի» դառնա խուլ կամ թույլ լսողություն ունեցող անձի համար: Ո՞վ է պատասխանատու վճարել ժեստերի լեզվի թարգմանչին և ի՞նչ պայմաններով:
- Ինչպե՞ս պետք է դպրոցները որոշեն հաշմանդամություն ունեցող աշակերտների կարիքները և ե՞րբ են նրանք պարտավոր տրամադրել մատչելի հարմարեցումներ և քաղաքականության փոփոխություններ երեխայի կրթության համար:
- Եթե հաշմանդամություն ունեցող անձը բողոք ունի իշխանության ներկայացուցիչի, ընկերության, կամ գործատուի դեմ մատչելի

հարմարեցումների հետ կապված, ինչպե՞ս կարող է վեճը լուծվել: Որո՞նք են բողոքները հարուցելու և լուծում տալու ժամկետները:

- Ո՞ր գործակալությունը կամ խումբն է պատասխանատու գտնել վերը նշված հարցերի պատասխանները: Ո՞վ է պատասխանատու հաստատել չափանիշներ, որոնք կդառնան իրավաբանորեն պարտադիր: Ո՞րն է անհրաժեշտ գործընթացը: Ինչպե՞ս են չափանիշները փոխվում հասարակության փոփոխման և նոր տեխնոլոգիաների հայտնաբերման և կիրառման հետ մեկտեղ:

Սրանք ընդամենը փոքր հարցերի օրինակներ են, որոնք պետք է հարցնել և պատասխանել օրենք ընդունելիս:

Որպես ռազմավարական հարց, տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող համայնքը կարող է որոշել առաջնահերթ ոլորտները, որոնք կցանկանային շուտափույթ կարգավորվել: Երբ կիրարկման զգալի մանրամասներ արդեն իսկ ուշադրության կենտրոնում են, ինչպես, օրինակ, ֆիզիկական մատչելիությունը կամ տրանսպորտային ու կրթության հիմնահարցերը , ապա համայնքը կարող է լուծել մեկ այլ հրատապ ոլորտի հարց:

Ինչպես յուրաքանչյուր հաշմանդամություն ունեցող անձ գիտի, մանրամասները կարևոր են: Եթե օրենքի կիրարկման մանրամասները պարզապես թողնվեն անհատական ընկերությունների, կառավարության աշխատակիցների, դպրոցների և գործատուների հայեցողությանը, առանց լրացուցիչ ուղղորդման, դրանք, ամենայն հավանականությամբ, սխալ ընթացք կստանան:

ՍԿԶԲՈՒՆՔ 9: ՉԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԱՌԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

Օրենքները խախտելու շատ կոնկրետ հետևանքներ ուժեղ և անմիջական խթաններ են հանդիսանում մարդկանց համար, որպեսի վերջիններս հետևեն դրանց:

Եթե գործատուից պահանջվում է բավարարել քվոտաները, այն վառ օրինակ կարող է ծառայել՝ ցույց տալու համար, թե ինչպես միջոցները կարող են կայուն փոփոխություն ապահովել:

Փիլիսոփայություն

Ինչպես ցանկացած այլ օրենք, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության օրենքները չեն կարող արդյունավետ լինել առանց հետևանքների, որոնք ուժի մետ են մտնում, երբ օրենքը խախտվում է: Իսկական միջոցը բաղկացած է երկու մասից:

1. Ուժային կառույցների համար պետք է լինեն միջոցներ՝ վերահսկելու, թե արդյոք մարդիկ իրականում հետևում են օրենքին:

Պարտավորությունների վերահսկողության սովորական եղանակները իրենց մեջ ներառում են. օրենքում ներառված կազմակերպություններից հաշվետվությունների պահանջում, օրենքի խախտման վերաբերյալ հանրությունից և հաշմանդամություն ունեցող անձանցից բողոքներ հավաքում և հետաքննում, դրանց ուղարկումը ուժային կառույցների ներկայացուցիչներին՝ բացահայտ կամ «քողի տակ», որպեսզի վերջիններս ստուգեն պարտավորությունների կատարումը սեփական ուժերով:

2. Երբ օրենքի խախտում է հայտնաբերվում, ուժային կառույցները պետք է ունենան լիազորված հեղինակություն, ով կհետևի օրենքի կիրարկմանը:

Ընդհանուր հետևանքները ներառում են. տուգանքների վճարում, դրամական վնասների (վնասի հատուցման) վճարում հաշմանդամություն ունեցող անձին՝ կազմակերպություններին ստիպելով վերացնել գոյություն ունեցող արգելքները և հետագայում հետևել օրենքին:

Օրենքի խախտման հետևանքները պետք է բավականին նշանակալից լինեն, որպեսզի ստիպեն համապատասխան ընկերություններին հետևել օրենքին. դրանք կարող են լինել թե անհատներ, թե խոշոր ընկերություններ: Օրենքի խախտման գինը չի կարող լինել այնքան հեշտ և ցածր, որ անհատներն ու ընկերությունները պատրաստ լինեն բազմիցս անգամ այն վճարել՝ անտեսելով օրենքը: Այլ կերպ ասած, օրենքը պետք է ունենա «ատամներ», այն պետք է «կծի», եթե իրեն չենթարկվեն: Բացի ֆինանսական հետևանքներին, օրենքին չենթարկվելու դեպքում պատասխանատու անձը ստիպված կլինի նաև շտկել իրավիճակը: Սա ոչ միայն խթան է հանդիսանում, այլ նաև մի մեխանիզմ է, որը փոփոխություններ է հարկադրում և ապահովում է հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Օրինակ

Եթե խոշոր ընկերությունը խտրականություն է կիրառում հաշմանդամություն ունեցող անձի հանդեպ, վճարվող տուգանքը պետք է լինի բավականին շատ, որպեսզի ստիպի նրանց դրականորեն փոխել իրենց պահվածքը՝ հետագա տուգանքներից խուսափելու համար, և ոչ թե չբռնվելու համար փնտրեն ավելի լավ եղանակներ:

Մի շարք երկրներ ունեն օրենքներ, որոնք պահանջում են պետական մարմիններից և մասնավոր ընկերություններից բավարարել զբաղվածության քվոտաները որոշակի ազգային փոքրամասնությունների համար, այդ թվում հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այն պահանջարկը, որ որոշակի տոկոսային թվով աշխատակիցների պետք է լինեն հաշմանդամություն ունեցող անձինք, հետապնդում է նպատակ. այն կբարձրացնի հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հնարավորությունները և նաև կկոտրի կարծրատիպեր՝ մեծացնելով հաշմանդամություն ունեցող և չունեցող անձանց շփումը:

Զբաղվածության քվոտան կլինի արդյունավետ, եթե.

1. Կա **նկատելի** հետևանք, ինչպիսին է տուգանքը՝ քվոտան չբավարարելու դեպքում:
2. Հաշմանդամություն ունեցող անձի համար գործում է սահմանված մեխանիզմ, ըստ որի վերջինս կարող է պաշտոնական բողոք ներկայացնել հարկադիր կատարման ծառայությանը կամ իրավական դատարան, եթե գործատուն չբավարարարի քվոտան:
3. Բողոքների կամ օրենքին չենթարկվելու ակտիվ հետաքննություն է գործում:
4. Գործում է մեխանիզմ, որը հնարավորություն է տալիս հավաքել պարտադրված տուգանքը և հետևում է, որ գործատուն փոխի իր գործելաոճը՝ պահանջները բավարարելու համար:
5. Գործատուները չեն կարող հեշտությամբ շրջանցել օրենքի նպատակը, օրինակ, աշխատանքի ընդունելով աշխատակիցների, ովքեր ունեն փոքր խնդիրներ, ինչպիսիք է հեռատեսությունը, և դասակարգում են նրանց որպես հաշմանդամություն ունեցող աշխատակիցներ, կամ հաշմանդամություն ունեցող անձանց ավելի ցածր են վարձատրում, քան այլ աշխատակիցների, կամ սահմանափակում են նրանց առաջխաղացման հնարավորությունները:

ՍԿԶԲՈՒՆՔ 10: ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ

Սոցիալական շարժումները կարող են ստեղծել քննադատական զանգված և կայունություն՝ այլ սոցիալական շարժումների հետ զարգացնելով ներառական նպատակներ:

«Առաջնորդության և հաշմանդամության կանանց ինստիտուտ» (WILD) ծրագրի մասնակիցները հավաքվել են ամբողջ աշխարհից՝ մասնակցելու Կանանց տոնի շքերթին:

Փիլիսոփայություն

Պատմականորեն մարդու իրավունքների հաջող և կայուն շարժումները նրանք են, որտեղ հասարակության զգալի շերտեր ճանաչում են փոփոխության անհրաժեշտությունը: Մասնավոր օրենքների, կառավարության քաղաքականության և սոցիալական / մշակութային գործելակերպերի կողմից ուղղակիորեն տուժած անձինք համախմբվում են՝ ձևավորելու շահերի պաշտպանության առաջատար շարժում, այնուհետև նաև իրականացնելու իրազեկում, ուսուցում և ստեղծելու դաշինքներ այլ համակիր սոցիալական շարժումների հետ: ԱՄՆ-ում այս ռազմավարությունը հաջողությամբ օգտագործվել է քաղաքացիական իրավունքների շարժման կողմից, որն առաջնորդվում էր աֆրոամերիկացիների կողմից և շարունակում է օգտագործվել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների շարժման կողմից:

Իրավական պաշտպանության բարելավման նպատակների համար հաշմանդամություն ունեցող ակտիվիստները պետք է կարևորեն արդեն գործող այլ սոցիալական շարժումների առաջնորդների հետ շփումը, ովքեր կարող են կիսել իրենց փորձն ու խորհրդատվություն տրամադրել արդյունավետ օրենքների, կանոնակարգերի և քաղաքականության ռազմավարությունների վերաբերյալ: Այլ իրավապաշտպան շարժումների փորձագետները ևս կարող են բացահայտել խտրականության դեմ պայքարի կամ մարդու իրավունքների մասին գործող օրենքները, որոնք կարող են օգտագործվել որպես լծակներ կամ մոդելներ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության դեմ պայքարում, նույնիսկ եթե հաշմանդամության հիմքով խտրականություն ակնհայտորեն չի նշվում:

Դաշնակից շարժումների առաջնորդները կարող են արժեքավոր գործնական աջակցություն ցուցաբերել հաշմանդամության շարժման գործողություններին, օրինակ՝ քաղված դասերը կիսելով, ներդրումներ կատարելով, տրամադրելով ոչ նյութական կամ իրային նվիրատվություններ կամ մոբիլիզացնելով իրենց ուժերը՝աջակցելու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների նպատակներին և գործողություններին: Քաղաքականություն մշակողների հետ շփում ունեցող այլ շարժումների դաշնակիցները կարող են սկսել բարձրացնել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերը և ներգրավել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների առաջնորդներին և ջատագովներին ազդեցիկ հանդիպումների ժամանակ, ինչպես նաև ծառայել որպես տեղեկատվության աղբյուր այն զարգացումների վերաբերյալ, որոնք կարող են ազդել հաշմանդամություն ունեցող անձանց մասին օրենքների և քաղաքականության վրա:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավապաշտպանների համար նույնքան կարևոր է ճանաչել և աջակցել այլ շարժումներին, ինչպիսիք են կանանց, էթնիկ փոքրամասնությունների, ԼԳԲՏՔ անձանց կամ բնիկների իրավունքների պաշտպանության շարժումներին: Այլ շարժումների հետ փոխկապակցվածությունը ճանաչում է այն իրողությունը, որ մարդիկ ունեն շատ տարբեր անհատական հատկանիշներ, ընդլայնում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների դաշնակիցների ցանցը և խրախուսում է այլ շարժման ղեկավարներին իրենց աշխատանքները դարձնել ներառական հաշմանդամության տեսանկյունից: ԱՄՆ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների շարժման որոշ առաջնորդներ կանայք էին, գեյ կամ լեսբուհի, կամ կոնկրետ ռասայական կամ էթնիկ խմբի անդամներ: Այս առաջնորդները հիշում և խորացնում էին իրենց առկա հարաբերությունները ոչ հաշմանդամային այլ շարժումների առաջնորդների հետ և չէին մոռանում այդ մյուս շարժումների կարիքները նույնիսկ այն դեպքում, երբ նրանք առաջ էին քաշում հաշմանդամային շարժման օրակարգը: Սա լրացուցիչ ժամանակ և հանձնառություն է պահանջում, սակայն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների շարժումը պետք է լինի ներառական՝ տասնամյակների

ընթացքում իսկապես կայունություն ապահովելու համար, ինչպես նաև պետք է նպաստի, որ հաշմանդամությունը հասնի քաղաքականության ցանկացած տարածք, որը ազդեցություն կունենա հաշմանդամություն ունեցող անձանց վրա:

Օրինակ, հաշմանդամություն ունեցող կանանց ակտիվիստները պետք է փոխհարաբերություն ունենան կանանց իրավունքների հիմնական կազմակերպությունների հետ, որպեսզի գենդերային խտրականության դեմ պայքարը ներառի հաշմանդամություն ունեցող կանանց խոսքերն ու մտահոգությունները: Առողջության պահպանման, զբաղվածության և բռնության դեմ պայքարի ոլորտներում կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված օրենքներն ու քաղաքականությունները, ըստ սահմանման, պետք է ներառեն հաշմանդամություն ունեցող կանանց պաշտպանությունը:

Օրինակ

Միացյալ Նահանգներում սոցիալական շարժումների բազմազան զանգվածները ներգրավվեցին Վերականգնողական ակտի 504-րդ բաժնի կիրարկման համար կանոնակարգեր ընդունելու պայքարում: 1977 թ. ապրիլին հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների առաջնորդներն ու կոալիցիաները ստանձնեցին այն պայքարը, ինչն էլ դարձավ Սան Ֆրանցիսկոյում (Կալիֆոռնիա) դաշնային շենքի 26 օրվա գրավումը, որի նպատակն էր ճնշել Կարթերի վարչակազմին՝ ստորագրելու և իրականացնելու Բաժին 504-ի կանոնակարգերը: Ոչ հաշմանդամային շահերի պաշտպանության խմբերն անհրաժեշտ օժանդակություն էին ցուցաբերում շենքից դուրս, քանի որ շենքից դուրս եկած յուրաքանչյուր ոք այլևս չէր կարողանում հետ վերադառնալ շենք: Օրինակ, Սև Լուսաններ / Black Panthers (աֆրոամերիկացի ակտիվիստների շարժումը) և Մոխրագույն Լուսաններ / Gray Panthers (տարիքային խտրականության դեմ պայքարող ակտիվիստները) խմբերը շենքի ներսում գտնվող ցուցարարներին աջակցելու նպատակով նվիրաբերում էին սնունդ, պարագաներ և դրամական միջոցներ՝ դեղորայք և բժշկական սարքավորումներ ձեռք բերելու համար:

Նույնիսկ 504-րդ բաժնի կանոնակարգի համար մղվող պայքարից հետո հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ակտիվիստները շարունակում էին մնալ Քաղաքացիական և Մարդու Իրավունքների Առաջնորդության Համաժողովի անբաժանելի մասը: Հաշմանդամություն ունեցող անձանց համայնքի անդամները աշխատում էին քաղաքացիական իրավունքների համաժողովի առաջնորդների հետ տարբեր հարցերի շուրջ, որոնք կարևոր էին քաղաքացիական իրավունքների բոլոր շարժումների համար, ինչպիսիք են 1991 թ. Քաղաքացիական իրավունքների մասին

օրենքը, որն օգնեց բարեփոխումներ իրականացնել, որպեսզի աշխատանքային խտրականության դեպքերը, ներառյալ հաշմանդամության հիմքով խտրականության դեպքերը կարողանային հասնել դատարան, այնուհետև ապացուցվել կամ փոխհատուցվել դատարանում: Առաջնորդության համաժողովը նաև տրամադրում էր ռազմավարական խորհրդատվություն և քաղաքական աջակցություն, երբ 2008 թ.-ին ընդունվեց «Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին ակտ»-ի (ADA) բարեփոխումների օրենքը, որպեսզի վերացնի ԱՄՆ-ի Գերագույն դատարանի կողմից կարգավորվող հաշմանդամության հիմքով խտրականության մի շարք դեպքերի ազդեցությունը: